371·2
Հ-99

կ·

ՀՐԱՀԱՆԳ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

371·2
Հ-99

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԻՍԱՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
Բաքու—1940

10535

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

ZUBP Acad. SSR
5963-53

Сдано в набор 26/III 1940 г.
Подписано к печати 8/IV 1940 г.
1 печ. лист. 37.200 тип. знак.

Главлит № 2368 Заказ № 730 Тираж 1000
Типография „Красный Восток" Азполиграфа.
Баку, ул. Юного пионера, 84

1 MAR 2010

Հաստատված է
ԱդրԽՍՀ Լուսավորության
Ժողովրդական Կոմիսարիատի
Կոլեգիայի կողմից։
1940 թ. մարտի 19-ին

ՀՐԱՀԱՆԳ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Տարեկան ստուգողական փոխադրման և ավարտման քննությունները անց են կացվում ԱդրԽՍՀ-ի բոլոր դպրոցներում և հանդիսանում են աշակերտների գիտելիքների տարեկան յեզրափակիչ հաշվառման ձևը։

§ 2. Դպրոցներում ստուգողական քննությունները անց են կացվում նպատակ ունենալով հայտաբերել փաստական գիտելիքները և դրանք աշակերտների կողմից յուրացնելու կայունությունը, նրանց անցած ուսման դասընթացի սահմաններում, սահմանել աշակերտի պատրաստվածությունը՝ նրան վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի բարձր դասարանում, տեխնիկու-

11 JUN 2013
47.489

մում կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում հաջողությամբ ուսուցանելու համար։

II. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՑԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 3. Ստուգողական քննությունների յեն յենթարկվում բոլոր աշակերտները՝ նրանց դասարանից դասարան փոխադրելիս և դպրոցն ավարտելիս, բացառությամբ տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների աշակերտների։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Դպրոցների սկզբնական դասարանների (I, II և III) աշակերտների փոխադրումը կամ նրանց նույն դասարանում թողնելը կատարվում է աշակերտների գիտելիքների տարեկան գնահատականների (թվանշանների) հիման վրա։

§ 4. Չորրորդ քառորդը վերջացնելուց հետո, բոլոր աշակերտներին դրվում են տարեկան գնահատականներ (թվանշաններ), բոլոր առարկաներից ուսումնական տարվա ընթացքում I, II, III և IV քառորդների ստացած գնահատականների (թվանշանների) հիման վրա։

Այն աշակերտները, վորոնք ըստ ուսումնական պլանի, հիմնական առարկաներից ունեն ավելի քան յերեք վատ գնահատական (թվանշան), ստուգողական քննությունների չեն թույլատրվում։ Այդ աշակերտները թողնվում են նույն դասարանում դասընթացը կրկնելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դրանից բացառություն են կազմում միայն այն աշակերտները, վորոնց անհառաջադիմությունն առաջ է յեկել հիվանդության, նույնպես և ուրիշ հարգելի պատճառներով (որինակ՝ տեղափոխությունները)։ Մանկավարժական խորհրդի վորոշմամբ, այդ աշակերտների քննությունները կարող են փոխադրվել աշնանը։

§ 5. Առողջությամբ առանձնապես թույլ աշակերտներին, վորոնք դրա մասին ունեն դպրոցական բժշկի յեզրակացությունը կամ պետական համապատասխան բուժհիմնարկության յեզրակացությունը, դպրոցի մանկավարժական խորհրդի վորոշմամբ կարող են փոխադրել հետևյալ դասարանն առանց քննության, յեթե ուսումնական տարվա ընթացքում նրանք ըստ ուսումնական պլանի հիմնական առարկաներից ունեցել են «բավարար» գնահատականից (թվանշանից) վոչ ցածր հառաջադիմություն։

§ 6. Վոչ լրիվ միջնակարգ դպրոցի ավարտական 7-րդ դասարանների և միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանների աշակերտների քննությունները, գարնանային քննությունների ժամանակ աշակերտների հիվանդության դեպքում, դպրոցի մանկավարժական խորհրդի վորոշմամբ կարող են փոխադրվել աշնանը. առանձին դեպքերում այդ աշակերտներն ուսումնական տարվա ընթացքում լավ հառաջադիմության առկայությամբ, կարող են քննություններից բոլորովին ազատվել և շրջանային-քաղաքային լուսբաժնի վարիչի թույլտվությամբ ավարտական ստանալ, ուսումնական տարվա բոլոր քառորդների համար ըստ տարեկան գնահատականների (թվանշանների) նրանց տալով համապատասխան վկայական կամ ատեստատ։

§ 7. Քննությունների մեջ չմտցված առարկաներից վատ թվանշաններ ունեցող աշակերտները, այդ առարկաներից լրացուցիչ քննության են յենթարկվում։

Լրացուցիչ քննությունները, տվյալ դասարանում, անց են կացվում հիմնական

քննությունները վերջացնելուց հետո և դրանց տրվում և յերեք որից վոչ ավելի։

§ 8. Քննություններն անց են կացվում հետևյալ առարկաներից և հետևյալ ժամկետներում.

IV դասարաններում. մայրենից լեզվից (գրավոր-թելադրություն), ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում (բանավոր), թվաբանությունից (գրավոր), աշխարհագրությունից (բանավոր). ընդամենը չորս քննություն, դրանցից՝ 2 գրավոր և 2 բանավոր, մայիսի 20-ից մինչև 27-ը ներառյալ—ընդամենը 8 որացուցային որ։

V դասարաններում. մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում (բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), աշխարհագրությունից (բանավոր). ընդամենը 6 քննություն. դրանցից՝ 2 գրավոր և 4 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ,—ընդամենը 15 որացուցային որ։

VI դասարաններում. մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում (բանավոր), հան-

բահաշվից, բուսաբանութիւնից, աշխարհագրութիւնից (բանավոր). ընդամենը 6 քննութիւն. դրանցից՝ 1 գրավոր և 5 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ, ընդամենը 15 որացուցային որ։

VII դասարաններում. մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում (գրավոր), հանրահաշվից (գրավոր), յերկրաչափութիւնից, ԽՍՀՄ Սահմանադրութիւնից, ֆիզիկայից, կենդանաբանութիւնից, աշխարհագրութիւնից (բոլորը բանավոր). ընդամենը 9 քննութիւն, դրանցից՝ 3 գրավոր և 6 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 8-ը ներառյալ,—ընդամենը 20 որացուցային որ։

VIII դասարաններում. գրականութիւնից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից և գրականութիւնից վոչ ռուսական դպրոցներում (բանավոր), հանրահաշվից, յերկրաչափութիւնից, մարդու անատոմիա-ֆիզիոլոգիայից, ֆիզիկայից (բոլորը բանավոր). ընդամենը 7 քննութիւն. դրանցից՝ 1 գրավոր և 6 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը,—ընդամենը 17 որացուցային որ։

IX դասարաններում. գրականութիւնից (գրավոր և բանավոր), վոչ ռուսական դպրոցներում ռուսաց լեզվից և գրականութիւնից (բանավոր), յերկրաչափութիւնից (բանավոր), հանրահաշվից (գրավոր), ֆիզիկայից, դարվինիզմի հիմունքներից, քիմիայից և աշխարհագրութիւնից (բոլորը բանավոր). ընդամենը 9 քննութիւն, դրանցից՝ 2 գրավոր և 7 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 8-ը ներառյալ,—ընդամենը 20 որացուցային որ։

X դասարաններում. գրականութիւնից (գրավոր և բանավոր), վոչ ռուսական դպրոցներում ռուսաց լեզվից և գրականութիւնից (գրավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), յերկրաչափութիւնից (գրավոր և բանավոր), յեռանկյունաչափութիւնից, ֆիզիկայից, քիմիայից, ԽՍՀՄ-ի պատմութիւնից, ոտար լեզվից (բոլորը բանավոր). ընդամենը 12 քննութիւն, դրանցից՝ 4 գրավոր և 8 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 17-ը ներառյալ,—ընդամենը 29 որացուցային որ։

§ 9. Քննութիւնների ժամանակ, դիտելիքների ստուգումն անց և կացվում Աղբ-

ԽՍՀ Լուսժողկոմատի կողմից տվյալ դասարանի համար սահմանված ամբողջ ծրագրային նյութի ծավալով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գրավոր քննությունները գրականությունից VIII, IX և X դասարաններում հանդիսանում են միաժամանակ և աշակերտների քերականական գիտելիքների և ունակությունների ստուգումն։

Շարադրությունը յեթե գրված է ուղղագրության տեսակետից անբավարար, ապա չի կարող գնահատվել «բավարար» գնահատականով։

§ 10. Այն դպրոցները, վորտեղ ուսման վորևե առարկայի ավանդումն հետ է մնում ԱԳԽՍՀ-ի Լուսժողկոմատի սահմանած ծրագրից, նրանց դիրեկտորներն ու վարիչները պարտավոր են ուսման 4-րդ քառորդի սկզբին այդ մասին հաղորդել շրջ(քաղ) լուսբաժնի վարիչին։ Դպրոցների այդ հաղորդումների առթիվ շրջ(քաղ) լուսբաժինների վարիչները պարտավոր են անձամբ, դպրոցի դիրեկտորի հետ մեկտեղ, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու ուսումնական ծրագրերի կատարումը դպրոցի կողմից, թույլատրելով միայն բացառիկ դեպքերում, յերբ դասարանը, չնայած ձեռք առած բոլոր միջոցներին, ուսման ծրագիրը լիովին չի

կատարել, աշակերտների քննությունները կատարել մինչև ուսման տարվա վերջը վաստորին անցած ծրագրային նյութերի ծավալով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ծրագրային նյութն անցնելու գործում հետ մնալու դեպքում X դասարանների աշակերտներին թողարկելու թույլտվությունն անձամբ տալիս են ԱԳԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարը կամ Նախ-ԱԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարը և ԼՂԱՄ մարզլուսբաժնի վարիչը։

§ 11. Քննությունների համար վոչ մի առանձին ծրագիր չի կազմվում։ Ուսուցիչները կրկնողության և քննությունների նախապատրաստման ժամանակ առաջնորդվում են պետական ծրագրերով և դասագրքերով։

Քննությունների նախապատրաստման ժամանակ՝ այդ ծրագրերը հայտնում և բացատրում են աշակերտներին, նշելով այն նյութերը, վորը նրանց կողմից պետք է կրկնվի դասագրքով։

§ 12. Բոլոր դասարաններում տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում բանավոր քննությունները կատարվում են տոմսերով։ Քննությունների համար

տոմսերը պատրաստում է տվյալ առարկայի դասատուն, դժվարության միատեսակ չափով, և քննությունների ժամանակ տալիս է աշակերտներին։

Յուրաքանչյուր տոմսը բաղկացած է ուսումնական ծրագրի զանազան բաժիններից աշակերտների հասկանալու համար պարզ և ընթեռնելի գրված 2—3 հարցից։

Յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ տոմսերի քանակը 30—40-ից ավելի չպիտի լինի։

Ամբողջովին վերցրած բոլոր տոմսերի հարցերը պիտի սպառեն ամբողջ ուսումնական ծրագիրը։

Քննության կանչված աշակերտը տոմսը վերցնում է անձամբ։ Յեթե աշակերտը դժվարանում է վերցրած տոմսի մեջ տրված հարցին պատասխանել, նրան թույլատրվում է 2-րդ տոմսը վերցնելու։

Անհրաժեշտ դեպքում, մասնավորապես յերբ աշակերտը դժվարանում է պատասխանել իր վերցրած տոմսում տրված հարցերին, ուսուցիչը կամ ասիստենտը կարող են լրացուցիչ հարցեր տալ աշակերտին՝ նրա

վարտական գիտելիքները դրսևորելու նպատակով։

Այն տոմսը, որով աշակերտը պատասխան է տվել, յերկրորդ անգամ դասարանի տվյալ խմբում չի ոգտագործվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Դիրեկտորը (վարիչը) քննության տոմսերը պետք է հաստատի քննություններից վաղ ուշ քան տասն օր առաջ և այն պահվում է դպրոցի դիրեկտորի (վարիչի) մոտ։

§ 13. Քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները մայրենի լեզվից IV, V, VI և VII դասարաններում պետք է կայանան թելադրությունից, գրականությունից VIII, IX և X դասարաններում շարադրություն գրականության թեմայից, ուսումնական տարվա ընթացքում անցած ծրագրային նյութի սահմաններում։ Շարադրության համար տրվում է 3 թեմա, աշակերտներին իրավունք տալով ընտրելու դրանցից մեկն ու մեկը։

§ 14. Քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները մաթեմատիկայից պետք է կայանան IV, V դասարաններում —թվաբանական մեկ խնդրից և յերկուորինակից, VII և IX դասարաններում—

հանրահաշվի 1 խնդրից և 2 օրինակից։ X դասարաններում հանրահաշվի 1 խնդրից և 2 օրինակից, երկրաչափության 1 խնդրից՝ տեռանկյունաչափության կիրառումով։ Խնդիրները և օրինակները պետք է տրվեն յերկու վարիանտով, դժվարության միատեսակ չափով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Զուգահեռ դասարաններում թելադրության տեքստերը, շարադրության թեմաները գրականությունից, օրինակները և խնդիրները մաթեմատիկայից պետք է տալ տարբեր վարիանտով, դժվարության միատեսակ չափով։

§ 15. Թելադրության տեքստերը, գրականությունից շարադրության թեմաները, մաթեմատիկայից խնդիրները և օրինակները բոլոր դասարանների աշակերտների համար (բացառությամբ X դասարանների և VII դասարանների — մայրենի լեզվից, ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում և ադրբեջաներեն լեզվից վոչ ադրբեջանական դպրոցներում) յուրաքանչյուր ուսման առարկայի և դասարանի վերաբերյալ նախապատրաստում է նրա դասատուն և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը)։

§ 16. Քննությունների ժամանակ գրականության շարադրության թեմաները, մաթեմատիկայի խնդիրներն ու օրինակները, շարադրման թեմաները ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում և ադրբեջաներեն լեզվից վոչ ադրբեջանական դպրոցներում X դասարանների աշակերտների համար և VII դասարանների թելադրության տեքստերը մշակվում են և հաստատվում անձամբ ԱԴՐԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարի, իսկ Նախիջևանի ԱԽՍՀ-ում—ՆԽԱԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարի և ԼՂԱ Մարզում—ԼՂԱ մարզլուսբաժնի ու Բագվում—Բագլուսբաժնի վարիչների կողմից ու հանձնվում են դպրոցների դիրեկտորներին՝ գրավոր քննություններից 2—3 որ առաջ։

Դպրոցների դիրեկտորներն այդ թեմաները դասատուներին հայտնում են միայն քննությունների որը։

VII և X դասարաններում լեզվից, գրականությունից և մաթեմատիկայից գրավոր քննությունների անցկացման համար ԱԴՐԽՍՀ Լուսժողկոմատը, ՆԽԱԽՍՀ Լուսժողկոմատը, ԼՂԱՄ մարզլուսբաժինը և Բագլուս-

բաժինը սահմանում են միասնական օրեր և հերթեր։

Սահմանված օրերի մասին տեղեկացնում են դպրոցներին վոչ ուշ քան ս/թ մայիսի 5-ը։

§ 17. Աշակերտները բոլոր գրավոր աշխատանքները կատարում են դպրոցի վարչության կողմից նախորոք պատրաստած թղթի վրա, նշված տվյալ դպրոցի կնիքով։

§ 18. Ուսման այն առարկաներից, որոնց նկատմամբ սահմանված են գրավոր և բանավոր քննություններ, առաջ կատարվում են գրավոր քննություններ։ Աշակերտների գրավոր աշխատանքները ուսուցչի և ասիստենտի կողմից պետք է ստուգվեն, գնահատվեն և հանձնվեն դպրոցի դիրեկտորին՝ տվյալ առարկայի նկատմամբ, անպայման բանավոր քննություններն սկսվելուց առաջ։

§ 19. Ստուգողական քննությունները դպրոցներում անց են կացնում դպրոցի դիրեկտորի (վարիչի) հաստատած ցուցակով։

Քննությունների ցուցակը պետք է դրվի դպրոցում փակցվի վոչ ուշ, քան ստուգողական քննություններն սկսելուց 10 որ առաջ։

§ 20. Քննությունների ցուցակը կազմելիս պետք է ղեկավարվել հետևյալով.

ա) ԱԳԻԽՍՀ-ի բոլոր դպրոցներում քննությունները սկսվում են մայիսի 20-ից.

բ) Թույլատրվում է մի որում անցկացնել միայն մի քննություն գրավոր կամ բանավոր.

գ) Յուրաքանչյուր գրավոր աշխատանքի համար հատկացվում է՝ IV դասարաններում—մեկ ժամ, V—VII դասարաններում—յերկու ժամից վոչ ավելի, VIII—X դասարաններում 3 ժամից վոչ ավելի.

դ) Բանավոր քննությունների համար IV դասարանում հատկացվում է որական վոչ ավելի քան 4 ուսումնական ժամ մեկ դասարանի համար, V—VII դասարաններում—որական վոչ ավելի քան 5 ուսումնական ժամ մեկ դասարանի համար, VIII—X դասարաններում—որական վոչ ավելի քան 6 ուսումնական ժամ մեկ դասարանի համար.

ե) Դասամիջոցները պարտադիր են յուրաքանչյուր ակադեմիական ժամից հետո, միայն բանավոր քննությունների ժամանակ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Քննությունները դասարանում մի առարկայից (բանավոր կամ գրավոր) պետք է վերջանան մի որում։ Դասարանի աշ-

կերանների քանակը շատ լինելու դեպքում բանավոր քննություններն անցկացնելիս, թույլատրվում է դասարանը բաժանել յերկու մասի (օրինակ՝ դասարանի կեսը քննությունները տալիս է առավոտյան ժամի 9-ից, իսկ մյուսը՝ ցերեկվա ժամի 1-ից)։

§ 21. Ստուգողական քննություններն անց են կացվում սովորական դասարանային պայմաններում, տվյալ դասարանի բոլոր աշակերտների կամ դասարանի մի մասի ներկայությամբ, յեթե դասարանը բաժանված է խմբերի։

Քննություններն անցած աշակերտներին իրավունք է տրվում մնալ դասարանում կամ դուրս գալ դասամիջոցին։ Գրավոր քննությունն անցկացնելիս, աշակերտը, վորը կատարել է գրավոր աշխատանքը և հանձնել ուսուցչին, պարտավոր է թողնել այն դասարանը, վորտեղ քննությունն է տեղի ունենում։

§ 22. Ուսման առարկայի քննություններն անց է կացնում այն ուսուցիչը, վորն այդ առարկան ավանդում է տվյալ դասարանում։ Քննությանը, վորպես ասիստենտ, ներկա յե լինում նույն դպրոցի այդ առարկայի (կամ նման առարկայի) դասատուներից մեկը՝ դպրոցի դիրեկտորի նշանակումով։ Ասիստենտն իրավունք ունի հարցեր տալու աշակերտներին և նրա գնահատականը (թվանշանը) ուսուցչի կողմից նկատի յե առնվում աշակերտի պատասխանները գնահատելիս։

III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ X ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

§ 23. X դասարաններում ավարտական քննություններն անց է կացնում հանձնաժողովը՝ դպրոցի դիրեկտորի նախագահությամբ և հետևյալ կազմով՝ տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը, դպրոցի դիրեկտորի նշանակած ասիստենտը և ժողովրդական կրթության համապատասխան բաժնի ներկայացուցիչը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Վորպես ժողովրդական կրթության բաժնի ներկայացուցիչ ներդրավում են պրոֆեսորները, համալսարանի, մանկավարժական և ուսուցչական ինստիտուտների դոցենտները, մանկավարժական ուսումնարանների դասատուները, դպրոցական տեսուչները։

2. Դպրոցի դիրեկտորը մինչև քննություններն սկսելը, պարտավոր է հանձնաժողովի անդամներին ծանոթացնել ներկա հրահանգի հետ։

§ 24. Քննությունների ժամանակ X դասարանների աշակերտների գրավոր աշխատանքների, նույնպես և նրանց բանավոր պատասխանների գնահատականը տալիս և հանձնաժողովը։ Դպրոցի դիրեկտորի յեզրակացությունը վերջնական և հանդիսանում։

IV. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՑԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§ 25. Աշակերտների փոխադրումը բարձր դասարանները կամ նրանց դպրոցն ավարտելը կարող է կատարվել միայն այն պայմանով, - յեթե տարվա ընթացքում ուսման դասընթացի յուրաքանչյուր առարկայից աշակերտի հառաջադիմությունը «միջակ» թվանշանից ցած չի գնահատված։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Նկարչությունից, յերգեցողությունից և ֆիզկուլտուրայից «միջակից» ցածը գնահատականները (թվանշանները) աշակերտին հետևյալ դասարանը փոխադրելու համար արդելք լինել չեն կարող։

§ 26. Ընդհանուր տարեկան գնահատականը (թվանշանը) սահմանվում է քննությունների ժամանակ աշակերտների ստացած յուրաքանչյուր առարկայից գնահատականների (թվանշանների) հիման վրա, հաշվի առնելով ուսումնական տարվա բոլոր քառորդների գնահատականները (թվանշանները)։

Ընդհանուր տարեկան գնահատականի (թվանշանի) հիման վրա դպրոցի մանկավարժական խորհուրդը վճռում է աշակերտին հետևյալ դասարանը փոխադրելու կամ նրա կողմից դպրոցն ավարտելու հարցը։

§ 27. Այն աշակերտները, վորոնք դարնանային քննությունների ժամանակ ստացել են 3-ից ավելի ընդհանուր տարեկան «վատ» կամ «շատ վատ» գնահատականներ (թվանշաններ), թողնվում են նույն դասարանում դասընթացը կրկնելու համար։

§ 28. Ուսումնական տարին ավարտելուց աշակերտներին տրվում են.

ա) վկայական—տարրական կամ վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածներին.

բ) attestus—միջնակարգ դպրոցն ավարտածներին, ըստ վորում նրանց, ովքեր հիմնական առարկաներից և վարքից ունեն «գերազանց» թվանշաններ, անկախ նկարչության, յերգեցողության և ֆիզկուլտուրայի գնահատականներից, տրվում է հատուկ

ատեստատ՝ նշելով, վոր նրանց իրավունք և վերապահվում բարձրագույն դպրոց մըտնել առանց քննությունների։

§ 29. Այն աշակերտները, վորոնք բոլոր հիմնական առարկաներից ստացել են ընդհանուր տարեկան «գերազանց» գնահատականներ (թվանշաններ), անկախ յերգեցողության, նկարչության և ֆիզկուլտուրայի գնահատականներից (թվանշաններից) և վարքից «գերազանց» գնահատական ունեն, մանկավարժական խորհրդի վորոշումով պարգևատրվում են գովասանագրերով։

§ 30. Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի աշակերտներին, վորոնք աշնան համար քննություններ են ստացել և այս կամ այն պատճառով ուրիշ դպրոց են տեղափոխվում, դպրոցի դիրեկտորի կամ վարիչի կողմից այդ մասին անհրաժեշտ տեղեկանք և տրվում։

V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

§ 31. Աշնանային ստուգողական քննությունները ԱԴԲՍՀ-ի բոլոր դպրոցներում անց և կացվում ոգոստոսի 20-ից մինչև 27-ը

ներառյալ, ամուր ցուցակով, հաստատված դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից և հայտարարված աշակերտներին մինչև նրանց ամառային արձակուրդներ տալը։

§ 32. Այն աշակերտները, վորոնք աշնան կրկնակի քննություններից հետո հիմնական առարկաներից թեկուզ և մեկից վերջնական ընդհանուր հանրագումարային «վատ» կամ «շատ վատ» գնահատական (թվանշան) են ստացել, թողնվում են դասընթացը կրկնելու համար։ Աշակերտների պայմանական փոխադրումներն արգելվում են։

§ 33. Դրավոր աշխատանքների տեքստերը, շարադրության թեմաները, խնդիրները և որինակները՝ աշնանային կրկնակի քննություններն անցկացնելու համար կազմում են համապատասխան ուսումնական դիսցիպլինների դասատուները և հաստատվում է դպրոցի դիրեկտորի կողմից։

§ 34. Դպրոցների դիրեկտորները (վարիչները) պարտավորվում են ոգնություն ցույց տալ աշակերտներին աշնան քննություններին պատրաստվելու համար (դպրոցական շենքեր տրամադրելը, խմբակային պարապմունքների կազմակերպումը և այլն)։

Անհանդիպելի կրկնակի քննություններ ստացած յուրաքանչյուր աշակերտի նախապատրաստության համար կոնկրետ միջոցառումները նշվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակիչ նիստում (այսինքն՝ դարձյալ քննությունները վերջանալիս)։

§ 35. Մանկավարժական խորհրդի վորոշումը յուրաքանչյուր աշակերտի մասին (յերկրորդ տարվան թողնելը, աշնան կրկնակի քննություններ նշանակելը) դպրոցի դիրեկտորը անմիջապես հայտնում է ծնողների գիտության։

VI. ԱԴՐԽՍՀ ՎՈՉ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 36. Ներկա հրահանգը վերաբերվում է բոլոր վոչ ադրբեջանական տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներին, վորոնք գտնվում են ԱդրԽՍՀ-ի տերիտորիայում։

§ 37. ԱդրԽՍՀ-ի բոլոր վոչ ադրբեջանական դպրոցներում անց են կացնում քննություններ ադրբեջաներեն լեզվից V, VI, VIII և IX դասարաններում—բանավոր,

VII դասարաններում գրավոր (թելադրություն), X դասարաններում գրավոր (շարադրում)։ Բանավոր քննությունների բովանդակությունը հետևյալն է V, VI, VIII և IX դասարաններում — ընթերցում, պատմում, քերականական վերլուծություն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԱդրԽՍՀ վոչ ադրբեջանական դպրոցներում ադրբեջաներեն լեզվի քննություններն անց են կացվում վոչ ադրբեջանական դպրոցների ծրագրի հիման վրա ԱդրԽՍՀ Լուսժողկոմատի 1939 թ. հաստատությամբ։

VII. ԱԴՐԽՍՀ ՎՈՉ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻՑ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 38. Ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում անց են կացվում գրավոր քննությունների հետևյալ տեսակները. VII դասարանում—թելադրություն, X դասարանում—շարադրում։

§ 39. Բանավոր քննությունների բովանդակությունը ռուսաց լեզվից հանդիսանում է. IV դասարանում — ընթերցում, ընթերցած տեքստի շուրջը հարցերի պատասխան. V և VI դասարաններում—ընթերցում, պատմում, քերականական վերլու-

ծությունն. VIII, IX դասարաններում—քերականական վերլուծություն և հարցեր գրականությունից։

VIII. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

§ 40. Գարնան քննությունների ժամանակ աշակերտների կատարած գրավոր աշխատանքների բոլոր տեքստերը (թելադրություններ, շարադրություններ, խնդիրներ, որինակներ և այլն) անպայման պահվում են դպրոցում և դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից պետք է ներկայացվեն տեսչին՝ աշակերտների քննությունների անցկացման ճշտությունը նրա կողմից ստուգելիս։

§ 41. Քննություններն անցկացրած յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայից քննությունները վերջանալու որը ճշտորեն լրացնում և դպրոցի դիրեկտորին և ներկայացնում քննությունների արձանագրությունը՝ յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների գնահատականներով (թվանշաններով) իր և իր ասիստենտի ստորագրություններով (տես քննությունների արձանագրության ձևը)։

§ 42. Ստուգողական, փոխադրական և ավարտական քննությունների ընդհանուր հանրագումարները քննարկվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակիչ նիստում։

§ 43. Արգելվում է տեղերում հրատարակել վորևե հրահանգ ստուգողական քննությունների կազմակերպման և անցկացման մասին։ Նույնպես կատեգորիկ կերպով արգելվում է պահանջել դպրոցների դիրեկտորներից (վարիչներից) ներկայացնելու քննությունների հանրագումարի մասին վորևե ստատիստիկական հաշվետվություն։

Ադրիանուպոլսի Տարրական յեվ Միջնակարգ դպրոցների Վարչության պետ՝
Թ. ԽԱՍՄԱՄԵԴՈՎ

ՀՍՍՌ Գլ. ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Դպրոցի դիրեկտոր (վարիչ) .....

.....

«.....» ..... 1940 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

..... ԱՄԻՍ (մարզի) ..... շրջանի

..... դպրոցի .....

դասարանում ..... քննությունների
(առարկան)

Ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը .....

.....

Ասիստենտի ազգանունը, անունը, հայրանունը .....

.....

(10-րդ դասարանների համար—նաև հանձնաժողովի անդամների ազգանուններն) .....

№ Ը/Կ	Աշակերտի ազգանունը, անունը	Գնահատ. (թվանշ.)	Ծանոթություն

Քննություններին չեն ներկայացել ..... աշակերտ:

Ուսուցիչ՝ .....

Ասիստենտ՝ .....

(10-րդ դասարանի համար—
հանձնաժողովի անդամներ)

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

ՀՀ Ազգային գրադարան
NL0222134

2 р 6
14
47. 489
26

ИНСТРУКЦИЯ
о проведении проверочных испытаний в школах

Наркомпрос АзССР
1940

Нар. СССР